



# YOU CAN OPT OUT

## KNOW YOUR RIGHTS

Շատ ծնողներ մտահոգված են այն ազդեցությամբ, որը նրանց երեխաների վրա թողնում է նահանգային պարտադիր ստանդարտացված թեստավորումը: Կալիֆորնիայի Ուսուցիչների Միությունը (California Teachers Association) տրամադրում է այս տեղեկատվությունը, որպեսզի իրազեկի ծնողներին իրենց իրավունքների մասին՝ դասակարգված քննություններից (բարձրագույն թեստավորումից) իրենց երեխաներին խույս տալու վերաբերյալ:

**Ի՞նչ է իրենից ներկայացնում CAASPP համակարգը:** Կալիֆորնիայի Ուսանողների Կատարողականության և Առաջադիմության Գնահատումը (California Assessment of Student Performance and Progress (CAASPP)) դա նահանգի պարտադիր և այլընտրանքային գնահատումների համակարգն է: Ներկայումս այն ներառում է երեք պարտադիր քննություն (թեստ)։ Ինտելեկտուալ Հավասարակշռված Գնահատումներ (Smarter Balanced Assessments), Կալիֆորնիայի Այլընտրանքային Գնահատումներ (California Alternate Assessments) և Կալիֆորնիայի Գիտական Գնահատումներ (California Science Assessments): Ինտելեկտուալ Հավասարակշռված Գնահատումները (Smarter Balanced Assessments) իրականացվում են անգլերեն լեզվին տիրապետելու արվեստի և մաթեմատիկայի մասով՝ 3-րդ դասարանից մինչև 8-րդ և 11-րդ դասարանների համար: CAASPP համակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <http://www.cde.ca.gov/ta/tg/ca> կայքէջը:

**Արդյո՞ք կարող են ծնողները խույս տալ իրենց երեխայի նահանգային թեստավորումից:** Այո: Կալիֆորնիայի Կրթության մասին Օրենսգրքի 60615 հոդվածի ([California Education Code section 60615](#)) համաձայն ծնողին կամ խնամակալին թույլատրվում է գրավոր խնդրանք ներկայացնել դպրոցի պաշտոնատար մարմիններին՝ իրենց երեխային որևիցե կամ բոլոր նահանգային պարտադիր գնահատումներից ազատելու համար: Կալիֆորնիայի Կանոնակարգումների մասին Օրենսգրքի 5-րդ Գլխի 852 Հոդվածը ([Section 852 of Title 5 of the California Code of Regulations](#)) այնուհետև նախատեսում է, որ ծնողները կամ խնամակալները կարող են դպրոցին տարեկան գրավոր խնդրանք ներկայացնել՝ իրենց երեխային դպրոցական տարվա CAASPP համակարգի որևիցե կամ բոլոր մասերից հարգելի պատճառաբանությամբ ազատելու համար:

**Ինչպե՞ս են ծնողները խույս տալիս իրենց երեխայի ստանդարտացված թեստավորումից:** Առանձնահատկությունները ճշտե՛ք Ձեր Դպրոցական շրջանից, սակայն սովորաբար ծնողները նամակ են գրում դպրոցի վերահսկիչին (superintendent) կամ տնօրենին (school principal)՝ իրազեկելով այն մասին, որ այս տարի իրենց երեխան չի մասնակցի որոշակի թեստավորմանը (նշե՛ք քննության (թեստի) անունը), ինչպես նաև խնդրելով, որպեսզի դպրոցը որևէ արդյունավետ կրթական փորձառություն նախապատասխանի իրենց երեխայի համար քննական շրջանի ընթացքում:

**Ի՞նչ ազդեցություն կունենա թեստավորումից խույս տալը իմ երեխայի գնահատականների կամ ուսումնական հեղինակության վրա:** Ներկայումս չկա նահանգի կողմից պարտադրված որևիցե հետևանք այն աշակերտների համար, որոնք չեն անցել Smarter Balanced Assessments թեստը, կամ այլ նահանգային պարտադիր քննությունները (թեստերը):

**Արդյո՞ք թեստավորումից խույս տալը օրինական է:** Այո: Մինչդեռ գոյություն ունեն դաշնային օրենքներ, որոնք պահանջում են, որպեսզի Նահանգները այդ քննությունները (թեստերը) կիրառեն իրավունակ աշակերտների առնվազն 95%-ի նկատմամբ, Յուրաքանչյուր Ուսանողը Հաջողության է հասնում Ակտով (Every Student Succeeds Act (ESSA)) ճանաչվում է թեստավորումից հրաժարվելու ծնողի իրավունքը այն նահանգներում, որտեղ գործում են խույս տալու մասին օրենքները: Կալիֆորնիայի Կրթության մասին Օրենսգրքի 60615 հոդվածով (California Education Code section 60615) ծնողին կամ խնամակալին թույլատրվում է գրավոր խնդրանք ներկայացնել դպրոցի պաշտոնատար մարմիններին՝ իրենց երեխային որևիցե կամ բոլոր նահանգային պարտադիր գնահատումներից ազատելու համար: Կալիֆորնիայի Կանոնակարգումների մասին Օրենսգրքի 5-րդ Գլխի 852 Հոդվածը (Section 852 of Title 5 of the California Code of Regulations) նախատեսում է, որ ծնողները կամ խնամակալները կարող են դպրոցին տարեկան գրավոր խնդրանք ներկայացնել՝ իրենց երեխային դպրոցական տարվա CAASPP համակարգի որևիցե կամ բոլոր մասերից հարգելի պատճառաբանությամբ ազատելու համար:

**Ի՞նչով կգրադվի իմ երեխան մինչդեռ անցկացվում են քննությունները (թեստերը):** Այդ ժամանակահատվածում աշակերտների մեծ մասին հանձնարարվում է այլընտրանքային կրթական գործնեություն:

**Ի՞նչ տեղի կունենա եթե ծնողը ներկայացրել է խույս տալու խնդրանքը, երբ CAASPP թեստավորումը արդեն սկսվել է:** Եթե ծնողի խնդրանքը ներկայացվում է թեստավորման շրջանի մեկնարկից հետո, ապա որևէ ավարտված քննություն (թեստ) կգնահատվի, և արդյունքները կզեկուցվեն ծնողին կամ խնամակալին և կներառվեն աշակերտի փաստաթղթերում:

**Արդյո՞ք թեստավորումից խույս տալը որևէ ծախս է ենթադրում իմ դպրոցի կամ շրջանի համար:** ESSA-ի համաձայն՝ դաշնային կառավարությունը կարող է կասեցնել այն նահանգների ֆինանսավորումը, որոնց ցուցանիշը իջնում է 95%-ի սահմանագծից և քաջալերում է նահանգներին ստեղծելու իրենց սեփական պատժամիջոցները տեղական շրջանների նկատմամբ: Առ այսօր, որևէ դաշնային ֆինանսավորում չի կասեցվել նահանգից, և ներկայումս

Կալիֆորնիան չունի որևէ նահանգային պատժամիջոց տեղական դպրոցական շրջանների նկատմամբ, որոնք չեն համապատասխանում սահմանագծին:

**Ի՞նչ դիրքորոշում ունի Կալիֆորնիայի Ուսուցիչների Միությունը (CTA) թեստավորման**

**վերաբերյալ:** CTA կարծիքով գնահատումները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացը իրազեկելու և աշակերտների սովորելու գործընթացը բարելավելու համար: Դրանք չեն ենթադրվում աշակերտներին կամ դպրոցներին պիտակավորելու համար: Նահանգային քննությունները (թեստերը) պետք է լինեն տարիքային և առարկայական պահանջներին համապատասխան և պետք է գերծ լինեն մշակութային, ռասայական, գենդերային (սեռային պատկանելիության), սոցիալ տնտեսական և լեզվական նախապաշարմունքներից: Աշակերտի նվաճումների և կատարելագործման ճշմարտացի արտապատկերումը միշտ կատարվում է բազմակի չափորոշիչների միջոցով, և երբեք չի կարող կենտրոնանալ ընդամենը մեկ քննության (թեստի) միավորների վրա:

**Ի՞նչ կարող եմ ես անել, որպեսզի աջակցեմ ուսանելը թեստավորմանը գերակայելու հարցում:**

Կապ հաստատե՛ք և կիսե՛ք Ձեր գաղափարները Ձեր տեղական կրթական միությունների, Ծնողների Միության (PTA), աշակերտների խորհուրդի (school site council) և դպրոցական խորհուրդի (school board) հետ: Աշխատե՛ք Ձեր շրջանի ուսուցիչների և ծնողների հետ՝ Ձեր Տեղական Վերահսկման Պատասխանատվության Ծրագիրը (Local Control Accountability Plan (LCAP)) մշակելու համար՝ կիզկետում ունենալով ուսանելու գործընթացը թեստավորմանը գերակայելու մոտեցումը:

**Ո՞րտեղից ես կարող եմ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ:**

Լրացուցիչ տեղեկատվություն ստացե՛ք այնպիսի կազմակերպությունների միջոցով, ինչպիսիսններից են՝ Կալիֆորնիայի Ուսուցիչների Միությունը (CTA) ([www.cta.org](http://www.cta.org)), Ազգային Կրթության Միությունը (National Education Association) ([www.nea.org](http://www.nea.org)), FairTest կազմակերպությունը ([www.fairtest.org](http://www.fairtest.org)), Parents Across America (Ամերիկայի Ծնողներ) կազմակերպությունը ([www.parentsacrossamerica.org](http://www.parentsacrossamerica.org)), և United Opt Out ([www.unitedoptout.com](http://www.unitedoptout.com)) շարժումը: